ԻՐԱՔԱՀԱՅ ԹԵՄ

ՄՈՒՍՈՒԼԻ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎԵԼԻՔ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԵՔԸ

Այս տարվա ապրիլի 26-ին մեծ թվով հավատացյալներ էին մասնակցելու նոր կառուցվելիք եկեղեցու հիմնարկեքի արարողությանը:

Արարողությունն սկսվեց թեմիս բարեջան առաջնորդ, Գերաշնորհ Տ. Ավագ արքեպիսկոպոս Ասատուրյանի գլխավորած թափորով: Հիմնարկեքի արարողությանը որպես կնքահայրեր հրավիրված էին եկեղեցու շինարարության համար նվիրատու ազգայիններ:

Հիշատակության արժանի է այն, որ այս հոգեպարար արարողությանն իր մասնակցությունը բերեց Մուսուլի շրջանի մեզ դավանակից Ասորի Օրթոդոքս համայնքապետ Սալիպա արքեպիսկոպոսը, որը առաջնորդ Սրբազան Հոր հրավերով Ս. Մյուռոնով օծեց վեմ-քարերից երեքը:

Արարողությունների վերջում առաջնորդ Սրբազան Հայրը շնորհավորեց իրաքահայությանը և ի մասնավորի Մուսուլի համայնքը, խրախուսեց բոլորին, որ նյութական աջակցություն բերեն եկեղեցու շինարարությանը:

ԱՎԶՐՈՒԿ ԳՅՈՒՂԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ Ս. ՎԱՐԴԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՈՒՄԸ

2000 թվականի մայիսին թեմիս բարեխնամ առաջնորդ, Գերաշնորհ Տ. Ավագ արքեպս. Ասատուրյանն Իրաքի հայաշատ կենտրոններին տված իր հովվական այցելությունների շարքին հիմնարկեքներ կատարեց հյուսիսային շրջանի Ավզրուկ հայկական գյուղում կառուցվելիք եկեղեցու: Աշխարհամատրան Կիրակիին զուգադիպող ապրիլի 29-ին կատարվեց սույն եկեղեցու օծումը:

«Զողորմութեան քո դուռն բաց...» շարականի երգեցողությամբ Սրբազան Հայրը նավակատիքը կատարեց նորակառույց եկեղեցու: Եվ ապա իր գլխավորած թափորով և հոծ հավատացյալների ներկայությամբ Նորին Սրբազնությունը մուտք գործեց

եկեղեցի: Եկեղեցու օծման խորհուրդը սկսվեց, երբ երկու քահանա հայրեր գինով և ջրով լվացին Ս. Սեղանը, իսկ Սրբազան Հայրը օծեց Ս. Սեղանը և եկեղեցու փասնվեց սյուների վրա զետեղված խաչքարերը:

Տյառնագրելով եկեղեցու չորս կողմերը, Սրբազան Հայրը նվիրագործեց Աստծուն նվիրված այս աղոթքի տունը. «յանուն Ս. Վարդան հաստատեալ եկեղեցի»: Այս արարողությունից հետո Սրբազանը մատուցեց նորաօծ եկեղեցու առաջին Սուրբ և անմահ Պատարագը և հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Իր քարոզի մեջ առաջնորդ Սրբազան Հայրը նախ շնորհավորեց գյուղի բնակիչներին, հորդորեց լինել Վարդան Մամիկոնյանի պես քաջարի հավատացյալներ:

Հիշատակության արժանի է, որ առաջնորդ Սրբազան Հոր դիմումին ընդառաջելով գերմանական «Caprni» հաստատությունը հանձն էր առել եկեղեցու շինարարությունը և կարճ ժամանակում ավարտին հասցրել այն, իսկ «The Chrch in need» հաստատությունը հանձն էր առել կառուցելու հոգևոր հովվի բնակարանը:

ԱՐԱՄ ՍՐԿ. ՔԵԹԵՆՃՅԱՆ